

**ՊԵՏՐՈՍ ՀԱՃԱՆ. ԴԻՄԱԳԻԾ ԵՎ ՀԱՏԿԱՆԻԸՆԵՐ\***

**Նոնա Դավթյան**

Արգենտինայի հայկական համայնքը, որի մասին հիշատակվում է դեռևս տասնյոթերորդ դարում, համալրվում է եղեօնի ահասարտութ օրերից հետո: Լիբանանյան պատերազմի օրերին շատ հայ ընտանիքներ նորից բռնում են գաղթի ճանապարհը: 1960-70-ական թվականների տվյալներով Արգենտինայում ապրում էր քառասուն հազար հայ, իսկ 2009-ի տվյալներով՝ հարյուր հազար, մեծ մասը կենտրոնացված է Բուենոս Այրեսում: Այստեղ գործում են մշակութային ընկերակցություններ, կրթական հաստատություններ, Հայաստանյան Առաքելական Եկեղեցու Արգենտինայն թեմը, գործում է նաև Արգենտինահայ գրողների միությունը, հրատարակվում են պարբերաթերթեր: Արգենտինահայ, ինչպես նաև կայունացած շատ հայօջախներում գերակա խնդիրը արդեն մեկ դար է՝ մնում է պահակա հոսանքներից հայի ինքնության, ներքին կերտպածքի պահպանության մեջ, որը դրված է թե՛ Եկեղեցու, թե՛ կրթօջախների, թե՛ ստեղծագործող անհատների ուսերին:

Ազգային հիշողությունը լավագույնս արթուր է պահպում գրականության մեջ, առաջար է սկյուռքում ստեղծվող գրականության ժանրային հետաքրքրում պահպանվում է Շահնուրից ածանցվող ահազանգի դողանջները: Կորուսունների ցավ-կարոտ-նահանջ. ահա այն թեմաները, որոնք սկյուռքում ստեղծվող գրականության ընթացք տվյալ ուղղություններն էին և են: Մնացորդաց, վերապրող և համալրվող սերունդից մինչև նորերը լծվեցին գրականությամբ անցյալը գողելու ներկային և ապագային: Համաստեղն ու Հ. Մնձուրին, Վ. Շուշանյանն ու Շ. Նարդունին, Վ. Հայկն ու Հ. Ասասուրյանը գրականությամբ փորձեցին կյանք ու շունչ տալ, փյունիկել անցյալի գյուղի, մարդկանց հիշատակները: Նրանք տերերն էին իրենց երկրի և արդար քրտինքով շենացնում ու ժաղկուն էին դարձնում այն, բայց յաթաղանի ուժով պոկեցին արմատներից և նետեցին անհյուրնեկալ անապատներ: Սահման խորչակից «վիրկված» հայը գրականություն բերեց իր և իրեն շրջապատող մարդկանց ողբերգություններով լի կյանքի տարեգործությունը: Հուշագրությունը դարձավ սկյուռքում ստեղծվող գրականության, առանձնապես արձակ երկերի տրուիլը: Սակայն երկերում հեղինակ-ասացողները ընդգծեցին ոչ միայն իրենց դիմանկարը, այլև ավելի շատ այն միջավայրն ու մարդկանց, ովքեր ապրել ու արարել են պատմական բնօրրանում:

Սկյուռքահայ գրականության արդիական փուլը, շարունակելով պահպանել Համաստեղ-Մնձուրիական արձակի ավանդները, Շահնուրյան նահանջի երանգների ժամանակային հնչողությունը, ներկայանում է նաև նոր խնդիրներով ու հարցադրումներով, բերում կառուցվածքային, ոճական, պատկերակերտումի նորություններ, շարունակում գեղարվեստականացնել հայի պատմական ընթացքը սեփական հայրենիքից դուրս, օտար, բայց և արդեն ճակատագրով իրենցը դարձած երկրներում, իր ամբողջությամբ ներկայանում նաև հայրենիքում ապրող ընթերցողին, ով այլև կաշկանդված չէր խորհրդային գաղափարապաշտության պարտադրած սահմանափակումներով:

\* Հոդվածն ընդունվել է 23.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Պետրոս Հաճյանը նույնպես կրողն ու շարունակողն է սկիզբանակում ստեղծվող գրականության դասական արժեքների, բայց նաև այդ արժեքներին նոր ու ինքնահատուկ երանգներ տվողներից մեկն է: Ազգային ոգին, հայրենիքի տեսլականով ապրող միտքը, Մալխասի «Զարթօնք» վեպի վեց հատորների ընթերցումը դարձան նրա ներշնչանքի աղբյուրը (հոդվածներից մեկում Հաճյանը հիշում է, որ դարոցական դասագրերից հետո առաջին գիրքը, որ կարդացել է, եղել է «Զարթօնքը»): Մալխասի կերտած հերոսները՝ Վարդանն ու Լևոնը, Սոնիան ու Եվգինեն, Արյուծ Գևոն ու Թոփիալ Սատանան հեղափոխական գաղափարապաշտության հունդն են նետել Հաճյանի սերնդի հավաքական նկարագրի ծևավորման մեջ:

Պ. Հաճյանը ապրել է գրական-տարածական երկու միջավայրերում՝ գունագեղ Արևելք՝ «հիթիթներու հազարամեայ եւ խեղճացած Կարկեմիշ» ու Հալեպ և Արգենտինա՝ Բուենոս Այրես: 1970-ին Հաճյանը թողնում է Հալեպի Քարեն Եփիկե ճեմարանի տնօրինությունը և երեսունինինգ տարի անսպառ նվիրումով վարում Բուենոս Այրեսի Առաջնորդարանին կից գործող Սուլը Գրիգոր Լուսավորիչ ամենօրյա կրթական հաստատության տնօրինությունը:

Գրական առաջին փորձերը կատարել է դեռ վաղ հասակում, պարմանության ժի տված ապրումներից ծնված խոհական բանաստեղծություններ և արծակ գրություններ էին դրանք, որոնք ծերբակալության ժամանակ մայրը՝ Ազնիվը, ու քույրը, ոչնչացնում են՝ գտնելով, որ հայտնաբերելու դեպքում խիստ կյանի Պետրոսի պատիժը: Հաճյանի գրական համեստ վաստակի տեր մարդուն, միշտ թվում էր, թե իր առաջին ստեղծագործությունները ամենից հաջողվածներն էին: Նրա մուտքը գրականություն եղավ «Զջողումը» պատմվածքով, որը հանձնել էր Անդրանիկ Ծառուկյանին, ով «տեղուն վրայ սրբագրած էր մէկ-երկու չնչին փոփոխութիւն ընկելով»[1], ապա հրատարակել «Նախրի» պարբերապերերի մեջ:

Պատմվածքի հիմքում նոր կյանք մտած երիտասարդի կենսափիլիստիվայությունն է: Առաջին տողն իսկ՝ «Մարդկային երջանկությունը ընորք է», հուշում է, որ հեղինակը փորձում է ճանաչել կյանքը, պեղել մարդու ներաշխարհը, ծնված փիլիստիվայական հարցադրումներին տալ «սպառիչ» պատասխաններ:

Պատմվածքի դիպային գործողությունների ընթացքը զարգանում է հենց հեղինակ և հերոսուիկ երկխոսության միջոցով: այստեղ գործը դառնում է ոչ թե գործողությունների ընթացքին հետևող, այլև անմիջապես իր դատումներով ու ենթադրություններով ընթացք է տալիս հերոսուի անկեղծանալուն, կյանքից պոկված մի դրվագի հոգեբանական զարգացմանը: Դիպայարի հիմքում սիրու և համատեղ կյանքի չստացված պատմությունն է, հիասքանչությունը ամուսնուց, դավաճանության մղող հանգամանքները, ի վերջո, կնոջ հոգում ծնված մեղքի զգացումն ու զղումը: «Այո՛, մեր կեանքը զղումներու շարք մըն է: Կը սիրենք՝ կը զղանք, կատենք՝ կը զղանք, կը կեղծենք՝ կը զղանք եւ կաղօթենք դարձեալ զղալու համար: Զղումը մարդկային կեանքի անխուսափելի պատիժ է»[2]:

Առաջին իսկ պատմվածքը խոսում է այն մասին, որ հեղինակը փորձում է ճանաչել կյանքի թրթիռը, հոգեբանական ելաչումները և վերարտադրել այն գրականության մեջ: Հետագա տարիներին Հաճյանի գրիչը ծառայեց միմիայն հրապարակային հոդվածներին, որոնք ցայսօր էի տարածված են տարբեր պարբերապերերում և հավաքագրելու, ամբողջացնելու կարիք ունեն, ինչն ավելի մեզ կմոտեցնի Հաճյանի գրողական աշխարհն ամբողջությամբ ընկալելու համար: Աշխատակցել է «Կանթեղ», «Արեւելք», «Յառաջ», ապա «Նոր Յառաջ», «Բագին», «Արմենիա» օրաթերթին, «Ազատօր»-ին:

## ՄԵՐՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

1980-ականներից Հայանը հրատարակում է մանկավարժական դասագրքեր՝ «Պարզ քերականություն», «Սոնիա, հայերէն գիտե՞ս», «Պատիկ լեզու, զուարթ լեզու», որոնք ցայսօր կիրավում են իր պաշտոնավարած կրթական հաստատությունում:

Բացի մանկավարժական աշխատություններից՝ Հայանը ընթերցողի սեղանին է դրել նաև գրականագիտական մտքի իր արգասիքները՝ «Հայ մտքի մշակներ» (*Grandes figuras de la cultura armenia*) երկու հաստորով (1987, 1990): Հայանը գրականության է վերադառնում քառասուն տարի «լրությունից» հետո՝ 1995-ին ընթերցողի դասին հանձնելով պատմվածքների առաջին ժողովածուն՝ «Հրամնեցէք, պարոններ» խորագով, ապա 2003-ին՝ «Կար ու չկար» ակնարկների ժողովածուն: Ակնարկաշարը Հայանի մանկավարժական գործունեության քարեն Եվկիեցից մինչև Գրիգոր Լուսավորիչ, հանրագումարն է: «Ինչպես որ հեքեաթները կը սկսին «Կար ու Չկար» ինքնիր մով հակասական եւ ինքզինք տեսաբար չէզոքացնող հրաշալի խօսքով...», այդպես էլ ժողովածուի ամեն մի պատում: «Կար ու Չկար աշնան իրիկուն մը...»[3] - գրում է արձակագիրը և միշտ հեքիաթի պես պատմում աշակերտուիկ քնարիկի և արար երիտասարդի սիրո պատմությունը: Ակնարկներին հեքիաթ է անվանել և Հակոբ Օշականը, և Շավարշ Նարդունին: Նարդունին այսպես է հիմնավորում. «Հեքիաթը հոգեկան կաթն է մարդկութեան, ո՞ր ժողովուրդին մեջ ո՞ր անհատն է, որ մօրը կաթը ծծելէն վերջ մտիք չէ ըրեր մօրը քաղցր հեքիաթներուն: Բոլորս աճեր ենք կաթով որ հեքիաթով...»[4]:

2003-ին է հրատարակում նաև «Լուցուած խօսքը. Հայկական Ցեղասպանութեան մտաւորական գոհերը», ապա «Հարիւր տարի, հարիւր պատմութիւն» գրքերը:

«Հարիւր տարի...»-ն, ինչպես նշում է հեղինակը, «պատմութիւն չէ, այլ անցեալ 100 տարիներու պատմութեան վերաքաղ մը», ասել է թե անցյալ դարաշրջանի հարյուր կարևորագոյն դեպքերի ու իրադարձությունների նկարագրություն, որոնց կիզակեցուում հայի լինելության խնդիրն է դրված: Գիրքը նաև հայրենասեր Հայանի կտակն է սերունդներին. «20-րդ դարը, - նկատում է Հայանը, - հայութեան կը կտակէ ազգային լուրջ եւ մտահոգիչ շարք մը խնդիրներ, որոնք պիտի կազմեն պայքարող հայութեան մնայուն օրակարգը»[5]: Իսկ այդ օրակարգի առաջնային խնդիրը «հայերէնի, յատկապես արեւմտահայերէնի շարունակական մաշումը եւ նահանջն է Սփիհութի մէջ», իսկ լեզվի նահանջը «անխուսափելիորէն կառաջնորդէ նաեւ ոգեկան նահանջի»[6]:

Երկրորդ կարևոր խնդիրը արտագաղթն է, որը «ոչ միայն մայր հողին արիւնահոսութիւնն է, այլեւ պարտադրուած սիհիւռքի ուսերուն կը բարդէ նոր, կամաւոր սիհիւռք մը»[7] (ընդգծումները՝ Ն. Դ-ի):

Ապա Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Շարունակելով թվարկել խնդիրները՝ հրապարակախոս Հայանը բոլորին ուշադրությունը սկսում է գերիսնդրին՝ «20 -րդ դարու մեծագոյն եւ առաջնագոյն կտակ»-ին՝ Հայոց ցեղասպանությանը. «անոր աղերսուող ազգային յիշողութեան պահպանումը եւ միջազգային ճանաչումի հետպնդումը: Բայց ոչ միայն ճանաչումը, այլեւ հաստուցման պահանջատիրությունը»[8]:

Ժողովուրդն ունի ֆենոմենալ հիշողություն, և տարիների հեռավորությունն ի գորու չի լինի մանկուրտության մասնելու նախորդ դարասկզբի մեծագոյն ողբերգությունը: 21-րդ դարի հայը նոր մարտահրավերների առաջ է կանգնում, նկատում է արձակագիրը, որովհետև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը միայն հարցի մեկ կողմն է՝ բարոյական կողմը, կա նաև Երկրորդ կարևոր՝ «քաղաքական հանգրուանը, որ շատ աւելի կնճռուտ է եւ անակնկալներով յոյի. հասուցման պահանջը, որ ամեն բանէ առաջ հողային է»[9]:

2005-ին հրատարակում է Հայանի ինքնակենսագրական տարեգրությունը՝ «Կարկեմիշ» վիպակը, որին հեղինակը տվել է Վեպ ենթախորագիրը: Այն 2008-ին

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

«Հրամմեցէք, պարոններ» պատմվածքների շարքի հետ միացյալ հասորով լուս տեսավ Երևանում՝ «Սկիյուռք» գիտականական կենտրոնի շնորհիվ՝ «Ճանապարհ դէպի Կարկեմիշ» խորագրով։ Նոյն թվականին Հաճյանը հրատարակում է նաև «Հարաւը Սկիյուքի մէջ» ակնարկաշարը։

Հաճյանի մանկավարժությանը, հրապարակագրությանն ու հայ գրականությանն անսպաս նվիրումը տևեց վարչուն տարի, գնահատվեց թե՛ Արգենտինայի հայ գաղթօքախում, թե՛ մայր հայրենիքում։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից Հաճյանը պարզւատրվել է «Սեպուա Մաշտոց» և «Սահակ- Մարտու» շրանշաններով։ 2010 թվականին ՀՀ նախագահի կողմից արժանացել է «Սովետ Խորենացի» մեդալին՝ հայապահանության և Սկիյուքում մայրենին պահպանելու ու զարգացնելու գործում ունեցած մեծ ավանդի համար։

Պետրոս Հաճյանը մահացել է 2012 թվականի սեպտեմբերի 4-ին, յոթանասումինը տարեկանում, Բուենոս Այրեսում։ Մարմինն ամփոփված է Ազգային Գերեզմանատան մեջ։ Արևելքի, արևելքու անխառն նկարագիր - ահա այն հանդերձանքը, որ կրեց իր վրա Հաճյանը մինչև մահ։ Տարիները, ապրած միջավայրը նրա մեջ չկարողացան սպանել գունազեր Արևելքը, դարձնել արգենտինահայ, տիրականը դարձալ մանկությունից իրեն որպես ժառանգություն թողված ձայնն էր։ «անոր գոյզը միշտ մնաց յարած Կարկեմիշին ու Հալէափին։ Երբեք արժանիքին նիւթով արձակ, տիպար անգամ չմշակեց»[10] - գրում է Ավետին Հաճյանը՝ արձակագրի որդին։

Նրան եւ չպահեց անգամ իրեն շատ հարազատ կուսակցությունից վտարվելու գաղափարը, շարունակեց գրչով նվիրվել Հայ Դատին։ «մնաց հայ հարազատ իր գաղափարմերուն, բայց հայ, դրոշակի եւ կուսակցական գյոներէ վեր»։

Համաստեղն ու Մնձուրին, Նարդունին ու Վահե Հայկը, Վազգեն Շուշանյանն ու Արամ Հայկազը իրենց գրականությամբ փրկեցին անցյալի գյուղն ու նրա մարդկանց իրական դիմանկարը, գրականություն բերեցին ցեղաջնությունի ահասարսութ օրերի, անապատող ժողովրդի միջը։

«Մեր տեղահանութենեն առաջ իմ գիտցածներս են, որ կպատմեմ, - գրում է Հ. Մնձուրին։ - **Անկե հետոն՝** ով ի՞նչ եղավ՝ չեմ գիտեր» [11]։ Հաճյանի և նրա սերմանկիցների գրականությունը «անկե հետո»-ի գրականություն է, ասեն տալիս է Մնձուրու «ով ի՞նչ եղավ» հարցադրման պատասխանը, հյուտում ճարապլուս այլևս իրենց երկրորդ հայրենիք դարձրած մարդկանց կյանքի հեքիաթը։ Առանձին սիրով ու գունային ինքնահատուկ երանգներով, կարուտի ահազնացող կրակով ու նուրբ նոտավորումներով արձակագիրը պատկերում է իրեն պատկանող Արևելքի կախարդանքը։ Հաճյանի արձակում կարուտը երկու ուղղություն ունի՝ հոր՝ սրբեկ Ավետիսի կարուտը էրգի և որդու կարուտը՝ հին ճարապլուսի հանդեպ։ Կարուտի և նահանջի կողքին Հաճյանը գրականություն է բերում հայի հայրենիք վերադառնալու՝ ներգաղթելու սպասումները, նկատում նաև թերությունները՝ այն, որ «կոմիտենի» տիգրանները շորեցին ներգաղթողի անգամ վերջին շապիկը։ Ներգաղթը տարբեր դիրքերում միավորեց գյուղաքաղաքի հայերը, թշնամացրեց միջանց։ Ինչ տվեց Ներգաղթը հիւստվ ու ակնկալիքներով սպասող եղեսիացուն, դիարբեքիցուն, նիզիպցուն, պերեմիկցուն, բացի նրանից, նկատում է գրողը, որ խախտվեց «օրինաչափութիւն մը, կենցաղային եղանակ մը, բան մը, որ փշուր-փշուր ըրաւ միախառնուած ճակատագիրը, ցաւերն ու հրճուանքները»։ Եվ «զարմանալի ու խորհուրդաւոր փլուզում մը բերաւ անոնց առօրեայ կենցաղին մէջ։ հիվանդին տրուած սիսալ դեղ մը եղաւ կարծես, որ երեւան բերաւ նոր վէրքեր կամ բորբոքեց հիմները»[12]։

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

«Ներգաղթը դարձաւ պատուիաս, խոր հիասթափութիւն: Ներգաղթը խորացրեց վիհր հայութեան երկու հաստուածների միջեն»[13] - նկատում է հայրենի գրադատ Սուլթեն Ղանիելյանը:

«Մեղեն է այս ներգաղթը» գրեց լիբանանահայ արծակագիր Էղվարդ Բոյաջյանը: «Ազատութիւն, թէ մեծ ստամոքս մը այս ներգաղթին նշանաբանը». օրում կախված հարցականը մտածելու տեղիք է տալիս՝ չարժեր վերադառնալ մի երկիր, ուր «Ինչ կոճակի որ կոխես, կժայթք թշվառություն, և ժամը, և համը բան մը»[14]:

Հատերը հիասթափեցին խորհրդային Հայաստանի որդեգրած սկզբունքներից: Արաջիններից մեկը Սուլշեն Իշխանը, ով ոգեկոչեց կարոտն ու ցավը, սպասում, որն ավելի մոտեցրեց նրան իր տեսիլներում մնացած հայրենիքին, բայց ոչ խորհրդային հայրենիքին: Հաճյանը նույնպես փարվեց երազայինին և, ի տարրերություն իր հոր՝ սրբեկ Ավետիսի, երբեք հայրենիք գալու մարմաջով չտարվեց: Այն հայրենիքը նկատի ունենք, որը կաշկանդված էր խորհրդային պարտադրված զաղակարապաշտությամբ: Իսկ իրականում ինչ եղավ այն մտավորականների հետ, ովքեր ակնկալիքներով վերադարձան հայրենիք՝ փորձելով դառնալ նրա գրականության զարկերակը. Կահան Թորովեցն, ում երեսունականներին հալածանքների ենթարկեցին և տարան գնդակահարության: Եղեռնից փրկված, որրանոցներում մեծացած Սահարու գրականությունը՝ Վանի ոգեկոչումը, դիտվեց նացիոնալիզմ, անցյալի հոեալականացում, ու նա ստիպված եղավ կյանքի տասնյոթ տարիները անցկացնել սիրիյյան աքսուրավայրերում՝ տաժանակրութան բավիրներում՝ ականջալուր «ծաղկած փշալարերի» ողբերգություն գումող երգին: Սա երեսունականներին, բայց երդ արդեն համենատաքար «ծնիհալի» տարիներին Կոստան Զարյանը հաստատվում է Հայաստանում, նրան գրկարած չընդունեց «նորին միջակությունը», իսկ գրական լուրջ արժեք ներկայացնող գործը՝ «Նավը լեռան վրա» վեպը, հրատարակվեց մկրտավելուց հետո միայն:

Հաճյամի հերոսները՝ Արուշ Տային, մսագործ Սելքոնը, Թոփալ Յուսուփի, Մերիսաթան Հովսեփի, նրանց պես շատերը անոխակալ տրամադրությամբ ամեն օր սպասեցին «քարտին», որով նրանց կընձեռվեր հնարավորություն երկիր վերադառնալու: Բայց սպասումը ծրարվեց, սավառնեց օդում, մոտովի հասավ հայրենիք, ապա կորսվեց մշուշներում՝ վերստին փոխարկվելով կարոտի, ապա հիասթափության՝ «Ներգաղթը հարսանիքի պէս սկսած էր հոն եւ յուղարկաւորութեան պէս վերջացած»[15] - գործ է Հաճյանը: Հային մնաց դարձյալ կարոտն ու պայքարը, մնաց կապարէ ծանրության պես այն հարցականը, որ մեկ դար է արդեն ուղեկցում է օստար երկինքն այլևս իրենցը դարձրած սերնդին՝ «ինչու ՞ ծնած էք հոս»:

Ճոխ ու պատկերավոր է Հաճյամի ոճը, շարժուն ու կենդանի՝ բարային բնանկարները. «ազնուափայլ օրիորդ արեւը՝ կարմրորակ երեսով եւ անդիմադրելի պշրանքով», «Եկեղեցի առաջնորդուուղ նորահարսի մը նման օրօրուն քալուածքով աշխարհ կը մտնէ՝ երեսը ծածկած քիչ թափանցիկ շղարշով...», «դպրոցէն արծակուող աշակերտի պէս պատրաստերու վրայ էր իր պայուսակը», «նշենիներու վարդագույն ծաղիկները կը համբուրուին արեւի վերջին ճառագայթներու հետո», Եփրատը գարնանը «կը վերածուիր փոփոլոյ դրւնչով կատլած շուներու վոհմակի մը»: Գրողի խոսքը պարզ, բայց միևնույն ժամանակ բազմաշերտ է՝ մաքուր արևմտահայերենից մինչև բարբառախություն և արաբերեն հայինախոսություն: Երեմն, կենցաղային նկարագրությունների մեջ, կանաց «միթինգներ»-ը հիշելով, հեղինակը զգուշավոր նկատում է. «չէմ կրնար արտաքերել հոս՝ վախնալով այս գիրքը կարդացողներու սրդողանքն»[16]:

Հաճյամի գրչի տակ սրբագրվում է գյուղաքաղաքը, լուսանկարի երևան գալու պես պատկերանում մարդկային «աղաւաղուած գիծեր», «անձանաշելի ստուերներ», ապա

## ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

«լուսանկարի լինելութեան ընթացքի» պես կերպարներն ամբողջանում են, կանգնում իրական դիմագծերով, բնավորությամբ: Նրանց մեջ կան անուններ, որոնք անցնելի դրոշմվել են հեղինակի հիշողության մեջ և «յամառօրէն կը յաճախէն յիշողութեանս, ամէն անգամ, որ մտնեմ Կարկեմիշի մշուշներուն մէջ»[17]: Հերոսներն անցնում են պատմվածքից պատմվածք, ապա նաև վիպակ: Հեղինակը չի թաքցնում իր անթաքույց համակրանքը Տիգրան Չառչի, Մերժապան Հովսեփի, Եռուտիքի, Մինասի հանդեա: Եռուտիքի դիմագծերը, դեմքին ընդգծված ժայխտը նկարագրելով՝ հեղինակը ավելացնում է. «Աւելի քան կէս դար է ես չեմ կրնար յիշողութեանս պատառէն ջնջել»[18]:

Նկարագրվող դեպքերը և պատմվածքներում, և ինքնակենսագրական վիպակում ժամանակային երկու կտրվածքով են կառուցված՝ ներկա-անցյալ-ներկա: Ներկան Բութենու Այրեսն է, որից հեղինակը հայացք է նետում անցյալին, անցյալը հին Ճարապլուսն է, որի մշուշներում թաղված է հեղինակի ոսկե մանկությունը: Անցյալի ժամանակային կտրվածքում է երրորդ միջավայրը՝ էրգիրը, որը սակայն տեսվանում է միայն հերոսների խոսքում՝ դաշնալով վերիուշի գրականության բացառիկ կտրոներ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սարդապատ», Նիւ Եորք, հիկտեմբեր 17, 2012:
2. Հաճեան Պ., Ճանապարհ դէպի Կարկեմիշ, Եր., 2008, էջ 30:
3. Հաճեան Պ., Կար ու Չկար, Պուէնոս Այրէս, 2003, էջ 40:
4. Նարդունի Ը., Ծաղկամատեան, Փարիզ, 1944, էջ 13:
5. Հաճեան Պ., 100 տարի, 100 պատմութիւն, Պուէնոս Այրէս, էջ 280:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, էջ 281:
9. Նույն տեղում, էջ 282:
10. «Սարդապատ», Նիւ Եորք, հիկտեմբեր 17, 2012:
11. Հակոբ Մնծուրի, Երկեր, «Սովետական գրող», Եր., 1986, էջ 366:
12. Հաճեան Պ., Ճանապարհ դէպի Կարկեմիշ, էջ 52:
13. Ռանիելյան Ս., Միջուկի տրոհումը, Գիրք 1, Եր., 2011, էջ 187:
14. Բոյաջյան Էդ., Հողը, Բեյրութ, 1948, էջ 35:
15. Հաճեան Պ., Ճանապարհ դէպի Կարկեմիշ, էջ 63:
16. Նույն տեղում, էջ 208:
17. Նույն տեղում, էջ 209:
18. Նույն տեղում:

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**  
**Պետրոս Հաճյան. դիմագիծ և հատկանիշներ**  
**Նոնա Դավթյան**

Սփյուռքահայ անվանի մանկավարժ, գրող Պ. Հաճյանը իր գրչով նոր ու ինքնահատուկ երանգներ տվեց սփյուռքում ստեղծվող գրականությանը: Հետևելով դասական գրողների ավանդներին՝ արձակագիրը իր ստեղծագործություններով փորձեց արթուն պահել ազգային հիշողությունը, պայքարեց հայի ինքնության, մայրենի լեզվի պահպանության համար՝ կտակելով «ցեղասպանութեան միջազգային ճանաչումի հետապնդում եւ հատուցման պահանջատիրութիւն»: Հողվածը համեստ փորձ է՝ արժևութելու Հաճյան արձակագրի վաթսուն տարիների անսպաս նվիրումը:

**Բանալի բառեր՝ էրգիր, կորուստների ցավ, վերհուշի գրականություն, կարոտ, նահնջ, ներգաղթ, տարեգրության ժամը, Ճարապլուս:**

**РЕЗЮМЕ**  
**Петрос Аджян. Характеристика творчества**  
**Нонна Давтян**

Известный зарубежный педагог, писатель П.Аджян своим первом придал новые и уникальные оттенки армянской литературе, создаваемой за рубежом. Следуя классическим писателям, в своих произведениях публицист попытался сохранить национальную память, бороться за самоопределение армян и сохранение родного языка, тем самым завещая “требование международного признания геноцида и его возмещения”.

В статье сделана попытка оценить прозаика П.Аджяна и его шестьдесят лет неизменной преданности.

**Ключевые слова:** страна, боль потери, литература воспоминаний, тоска, потеря, иммиграция, хроника жанра, Чараплус.

**SUMMARY**  
**Petros Hadjian. Characteristics of the works**  
**Nona Davtyan**

The famous Armenian diaspora teacher and publicist P. Hadjian with his skillful pen imparted new and unique shades to Armenian literature created abroad. Following the contribution of classical writers, the writer attempts to preserve the national memory, struggles for the Armenian identity and Armenian language, bequeathing "the international recognition of the genocide and its adequate compensation".

The article is an attempt to evaluate prose writer P.Hadjian and his sixty years of constant devotion.

**Keywords:** country, the pain of loss, literature memories, longing, loss, immigration, the chronicle of the genre, Charaplust.